

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
Ի Ր Ա Վ Ա Բ Ա Ն Ն Ե Ր Ի Մ Ի Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 2 (64)
2014 թ.

Գլխավոր խմբագիր՝
ի.գ.թ., պրոֆ. Լևոն Օհանյան

Խ մ բ ա գ ռ ա կ ա ն խ ո Ր Ի Ո Ւ Ր Պ

Սամվել Դիլբանդյան -

ի.գ.դ., գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

ի.գ.թ., պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան - ի.գ.դ.

Հարություն Խաչիկյան - ի.գ.դ.

Արմեն Հայկյանց - ի.գ.դ.

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան - ի.գ.դ.

Սերգեյ Առաքելյան - ի.գ.թ.

Վիգեն Քոչարյան - ի.գ.թ.

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ

Խմբագրության հասցեն՝
ՀՀ, 0025 Երևան,
Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ
իրավագիտության ֆակուլտետ:
Հեռ. 060-71-02-47
Էլ. կայք՝ www.orenq.am

Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:
12 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:
e-mail: ysu@ysu.am
Դասիչ՝ 77771
Տպագրական 7 մամուլ
Գրանցման քիվը՝ 798
Տպաքանակը՝ 500
Գինը՝ պայմանագրային
Հանձնված է շարվածքի
18.05.2014
Հանձնված է տպագրության
3.07.2014

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ГОСУДАРСТВО И ПРАВО

Номер 2 (64)
2014 г.

Главный редактор:
к.ю.н., проф. Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА,
Юридический факультет ЕГУ

Редакционный совет

Самвел Дилбандян -

д.ю.н., зам. главного редактора

Давид Мелконян -

к.ю.н., ответственный секретарь

Геворг Даниелян - д.ю.н.

Арутюн Хачикян - д.ю.н.

Армен Айкянц - д.ю.н.

Гагик Амбарцумян

Артур Вагаршян - д.ю.н.

Сергей Аракелян - к.ю.н.

Виген Кочарян - к.ю.н.

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1, юридический
факультет ЕГУ.
Тел.: 060-71-02-47
e-mail: a_petrosyan@ysu.am
web: www.orenq.am

8 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 18.05.2014
Подписано к печати 3.07.2014

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գազիկ Դագինյան, Տաթևիկ Սուլջան

ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ
ԿԱՆՈՆԱԿԱՐԳՄԱՆ ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ.....5

Սամվել Դիլբանդյան

ՉԵՐԲԱԿԱՆԱԿԱԾ ԱՆՋԻ ԻՐԱԿՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎԱԶԱՓ ՇԱՀԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ 16

Հրայր Դուկասյան, Անահիտ Հարությունյան

ՈՉ ԻՐԱՎԱԶԱՓ ՎԱՐՔԱԳԾԻ ԱՐԳԵԼՔԸ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԷԹԻԿԱՅԻ ԼՈՒՅՄԻ
ՆԵՐՔՈ.....26

Դավիթ Ավետիսյան

ՀԻՄՆԱՎՈՐ ԿԱՍԿԱԾԸ ՈՐՊԵՍ ԽԱՓԱՆՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՈՄԱՆ
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ
ՆԱԽԱԳԾԻ35

Վահե Ենգիբադյան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ45

Արթուր Զախոյան

ՀԱՏՈՒԿ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....53

Դավիթ Մելքոնյան

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻ ՆՈՐ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱԿՇԻՈՆՆԵՐԸ62

Դավիթ Խաչատրյան

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹ. ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ,
ԿԻՐԱՈՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ68

Արսեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ ԸՍՏ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ89

Գևորգ Բաղդասարյան

ԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐՆ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ.....99

Արժեքն Գովհաննիսյան

Նոր երեւան եկած Յանգաւանքներով բացառիկ ՎերանաՅման Գիտքերի՝
ԴԱՏԱՎՈՐՈՎ ԶԱՍՏԱՏՎԱԾ ԶԼԻՆԵԼՈՒ ԴԵՏ ԿԱՊՎԱԾ ԴԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԳՅ ՔՐԵԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԵՎ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ....110

Նեյի Աղաբաբյան

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԶԵՐԲԱԿԱԼՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱԿՈՐՄԱՆ
ԱՌԱՆՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ
ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ.....119

Սարգսյան Հայկ

ԴԱՏԱԽԱՋԻ ԿՈՂՄԻՑ ՄԵՂԱԴՐԱՆՔԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ ԸՍՏ ՀՀ
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ.....130

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՒՅԹ. ԻՐԱՎԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՆ ՈՒ ԿԱՐԳԸ, ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԱՇՆԻՔՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Դավիթ Խաչատուրյան

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ,
իրավաբանական գիտությունների թեկնածու,
Արդարադատության ակադեմիայի պրոռեկտոր*

1. Համագործակցության վարույթի իրավափիլիսոփայական և կրիմինալոգիական հիմքերը

1.1. «Քո վկաները չեն կարող հրեշտակներ լինել, եթե հանցագործությունը կատարվել է դժոխքում», – ասում է ամերիկյան ասացվածքը: Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) ներդրվող համագործակցության վարույթի ինստիտուտի նպատակն է ապահովել այն հանցագործությունների բացահայտումը և դրանց վերաբերյալ գործերով արդյունավետ քրեական հետապնդումը, որոնց մասին ցանկացած տեղեկատվություն փակ է դրսի աշխարհի համար և փաստի ուժով գտնվում է հենց հանցավորների բացառիկ իմացության ներքո: Որքան էլ փակ լինի այդ տեղեկատվությունը, դրա գոյությունը, սակայն, արդեն իսկ կանխավարկածվում է հանցագործության կատարման կամ հանցավոր համագործակցության որևէ ձևաչափի առկայության փաստով:

1.2. Նշված տեղեկատվության առանձնահատկությունը և բարձրարժեքությունը նրանք են, որ այն ոչ թե պարզապես հանցավոր որևէ գործունեության դրսևորում է, այլ ինքնին հանցավոր դիտավորության ձևավորման և իրացման շարժիչ ուժն է, հանցավոր փակ համակարգի կենսագործունեության «զենետիկ» և վարքագծային կողմնակախ այդ համակարգի ծավալից/որակից և ընդգրկված անձանց շրջանակի մեծությունից ու նրանց միջև հիերարխիկ կապերի բարդությունից: Համակարգը իր կենսագործունեության ընթացքում չի կռահում, որ հնարավոր է այդ տեղեկատվությունն իրենից առանձնացվի, իսկ այն կրող որևէ սուբյեկտ օտարվի իրենից և նույնիսկ գործի իր դեմ: Համակարգի գործող անձինք էլ վստահ են, որ չեն բացահայտվելու, որ այդ տեղեկատվությունը երբեք չի օգտագործվելու իրենց դեմ, մանավանդ հենց իրենց կողմից: Հենց այս անվերապահ վստահությունն է, որ անգերագնահատելի արժեք է հաղորդում հանցավոր շղթայի մասին տեղեկատվությանը, քանի որ այդ տեղեկատվությունը ձևավորվել է անխոցելիության այս կանխավարկածի թմրեցնող անհոգության ներքո: Հետևաբար, չափազանց բարձր է ոչ միայն այդ տեղեկությունների փաստացի արժեքը՝ կապված հանցագործության բացահայտումն ապահովելու հետ, այլև դրանց դատավարական հեռարձակման միջոցների՝ մերկացնող ցուցմունքների արժանահավատությունը:

1.3. Համագործակցության վարույթը, որն այս ինստիտուտի առավել մեծ կիրառումն ապահովող ԱՄՆ-ում ընդունված է կոչել «համագործակցության համաձայնագրերի վարույթ», օգտագործվում է կազմակերպված հանցավորության տարբեր դրսևորումների, ահաբեկչության, մասնավորապես՝ բարդ, բազմաէպիզոդ, տևական բնույթ կրող

կոռուպցիոն հանցագործությունների, թմրամիջոցների և զենքի ապօրինի շրջանառության, մարդկանց առևտրի և նմանատիպ այլ հանցագործությունների վերաբերյալ գործերով, ինչպես նաև առանձնապես ծանր և բարդ քննություն ենթադրող այլ արարքների վերաբերյալ գործերով: ԱՄՆ-ում այս ինստիտուտի կիրառումն այնքան արմատացած է, որ երբեմն այն կոչում են հանցավորության դեմ պայքարի *ancient* (հնագույն, *древний*) եղանակ, ու մասնավորապես Նյու Յորքի դաշնային արդարադատության համակարգում, քաղաքի Հարավային և Արևելյան դատական շրջանների վիճակագրության համաձայն, դաշնային համակարգով անցնող մեղադրյալների մեկ երրորդը կա՛մ արդեն կնքել են համագործակցության համաձայնագիր, կա՛մ էլ ձգտում են դրան¹:

1.4. Այս ինստիտուտը կյանքի է կոչված՝ ապահովելու, որ տուժող հասարակությունը հնարավորինս արդյունավետ հակադարձի իր հիմքերը խարխլող առանձին հանցավոր անհատներին և դրանց խմբավորումներին:² Համագործակցության վարույթի նպատակը ոչ թե պարզապես ավելի ծանր հանցագործությունը բացահայտելն ու մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելն է, այլ, ի վերջո, համարժեք պատասխան տալը հանցավոր դրսևորումները ծնող փոքր թե մեծ համակարգին: Վերջնական նպատակն է բարձրանալ այս՝ սեփական կանոններով ապրող համակարգերի աստիճանակարգության հնարավորինս բարձր կետը և դադարեցնել հանցավոր համաձայնությունների, դավադրությունների ձևավորումը, գործառույթների տարանջատումն ապահովող տեղեկատվության շրջանառությունը, այսպիսով կազմաքանդել հանցավոր համագործակցությունը, այլ ոչ թե թռուցիկ պայքար մղել դրա առանձին դրսևորումների դեմ՝ պատժելով միայն այն անձին, ում հաճախ զոհաբերում է ինքը՝ համակարգը՝ իր անխափան կենսագործունեությունը՝ այսպես կոչված «ինստիտուցիոնալ անձեռնմխելիությունը» ապահովելու համար:

1.5. Հենց այս պատճառով էլ հասարակությունը համաձայն է, որ այս չարիքների դեմ պայքարելու համար կարելի է գնալ սոցիալական պաշտպանության ավանդական միջոցներից որոշ զիջումների, որոնցից ամենակարևորն այն է, որ *ոչ բոլոր հանցագործները պետք է ենթարկվեն համարժեք պատասխանատվության*: Սա, ինչ խոսք, դատավարական հայեցողության լուրջ հնարավորություններ և միաժամանակ պատասխանատվություն է ստեղծում հենց դատախազության համար, որը և քրեական դատավարությունում մարմնավորում է համընդհանուր տուժող հասարակությունը: Ղատախազն է, որ պետք է ապահովի այնպիսի պատիժ, որն իրոք կհամապատասխանի արդարացի հատուցման մասին հասարակության, ողջամիտ դիտորդի պատկերացումներին և հասարակությանը այդպիսով կհաշտեցնի հանցագործի հետ: Այս, այսինքն՝ պատժի համարժեքության և անխուսափելիության կոնցեպցիայի մեջ է մտնում ոչ միայն կատարող կամ, ավելի ճիշտ է ասել, *գործող* հանցագործներին պատժելը, այլև առաջին հերթին՝ հենց հրաման արձակողներին չեզոքացնելը: *Համագործակցության վարույթի գերնպատակն է, այսպիսով, ոչ թե պատժել հանցագործություն կատարող անձանց, այլ քանդել հանցագործներ արտադրող համակարգը*:

¹ St'e u Jonathan Marks, All About Cooperation, (Ձոնաթան Մարքս, Ամեն ինչ համագործակցության մասին) <http://www.jonmarks.com/ny-cooperation-federal-system.html>

² Ըստ Հեգելի իրավունքի փիլիսոփայության՝ «տուժող կողմի փոխարեն հանդես է գալիս տուժող համընդհանուրը, որը, ի դեմս դատարանի, օժտված է հատուկ իրականությամբ և իր վրա է վերցնում հանցագործին հետապնդելու և հանցագործությունը պատժելու գործառույթը, ինչը հենց այդտեղ դադարում է սոսկ սուբյեկտիվ և պատահական հատուցում, վրեժ լինելուց և փոխակերպվում է իրավունքի՝ ինքն իր հետ հաշտվելուն, պատժի» (Гегель, Философия права, М. 1990, с. 258):

2. Համագործակցության վարույթի կիրառման շրջանակն ըստ ՀՀ քրեական դատա-վարության նոր օրենսգրքի նախագծի

2.1. Վերոգրյալի պատճառով Նախագծում այս ինստիտուտի ամրագրումը միանգամայն ողջունելի է. այն հնարավորություն կտա՝ հանցավորները, հասարակությունից ներողամտություն հայցելու իրավունք ունենալով, օգնեն այդ նույն հասարակությանը առավել մեծ վտանգավորություն ունեցող դերակատարների բացահայտման ու վնասագործման գործում: Ներողամտություն հայցելու այդ իրավունքը նույնպես բնական է և բխում է իրավունքի փիլիսոփայությունից. հասարակությունը պետք է հաշտվի նվազ վտանգավոր հանցագործի հետ՝ նրան պատժից ազատելով կամ այլ մեղմ վերաբերմունք դրսևորելով: Չէ՞ որ այդ նվազ վտանգավոր հանցագործը ցուցմունք է տալու այն անձի դեմ, որից վրեժ լուծելու, հատուցում ստանալու խնդիր ունի հասարակությունը՝ անկախ *կատարողին* պատժելու փաստից: Այս ինստիտուտը ճիշտ կիրառելու դեպքում հանցավոր գործունեության առավել ծանր դրսևորումները բացահայտելու և մեղավորներին համարժեք քրեական պատասխանատվության ենթարկելու իրական երաշխիքներ կստեղծի: Ինստիտուտի այս առաքելությունը հստակ սահմանված է Նախագծի 460-րդ հոդվածի (*Համագործակցության վարույթի նպատակը և կիրառելու հիմքը*) 1-ին մասում՝ «Ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների բացահայտումը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելը»:

2.2. Միաժամանակ պետք է նշել, որ Նախագիծը, և սա բնական է, հաշվի առնելով, որ համագործակցության վարույթը ամրագրվում է առաջին անգամ, պարունակում է այս ինստիտուտի կիրառման երկու կարևորագույն սահմանափակում, մասնավորապես՝ համագործակցության վարույթը կարող է կիրառվել միայն՝

- ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության մեջ, ինչպես նաև ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության օժանդակության համար մեղադրվող անձի կողմից համագործակցության միջնորդություն ներկայացնելու դեպքում,

- եթե համագործակցության միջնորդությունը վերաբերում է տվյալ անձին ներկայացված մեղադրանքին առնչվող հանցագործությանը, որը քննվում է նույն կամ մեկ այլ վարույթով (*Հոդված 460, մաս 2-րդ և մաս 3-րդ*):

Համագործակցության վարույթի սկզբնական փորձարկումից հետո այս ինստիտուտի ընձեռած հնարավորությունները լիարժեք իրացնելու նպատակով, մեր կարծիքով, անհրաժեշտ կլինի ընդլայնել դրա կիրառման ոլորտը՝ բնականաբար նախատեսելով համապատասխան մեխանիզմներ, որոնք ներկայացված են այս վերլուծության 6-րդ կետում:

3. Համագործակցության վարույթի կիրառման կարգի սկզբունքային առանձնահատկությունները վարույթի ընդհանուր կարգի համեմատ

3.1. Այս կետում փորձ է արվում ուսումնասիրել նշված առանձնահատկություններն ըստ երկու խմբի՝ ընդհանուր սկզբունքներից շեղում պարունակող նորմեր և ընդհանուր սկզբունքների կիրառման լրացուցիչ երաշխիքներ պարունակող նորմեր: Նախագիծը՝ որպես ելակետային նորմ, ամենասկզբից նշում է, որ համագործակցության վարույթում կարող են շեղումներ թույլատրվել կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքներից (*հոդված 21. Կողմերի հավասարությունը և մրցակցությունը*): Սա մեծ հաշվով կարելի է ընկալել որպես այն գիջման օրենսդրական ամրագրում, որին հասարակությունը համաձայն է դիմելու հանցագործություններ ծնող համակարգերը կազմաքանդելու իր առավել կարևոր նպատակն իրագործելիս՝ այդ համակարգի առանձին դրսևորումների նկատմամբ սոցիալական պաշտպանության (հետապնդելու և պատժելու) ավանդականից շեղվող եղանակներ որդեգրելով: Նշված շեղումների տարբերակ-

ներ կարելի է համարել հետևյալ նորմերը՝

3.1.1. *Պարտադիր մեղմ վերաբերմունք համագործակցության վարույթի շրջանակներում իր դատավարական պարտականությունները կատարած անձի նկատմամբ.*

«3. Հետագոտված ապացույցներով մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած իր պարտականությունների կատարումը, ինչպես նաև համագործակցության նպատակի նվաճումը հաստատված համարելու դեպքում դատարանը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի ընդհանուր մասի դրույթները, մեղադրյալի նկատմամբ կայացնում է մեղադրական դատավճիռ՝ նշանակելով օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելով» (*Հոդված 469. Համագործակցության վարույթով դատավճիռ կայացնելը*):

Փաստորեն, այստեղ շեղում է թույլատրվում նաև այն սկզբունքից, որ արարքի հանցավորությունն ու պատժելիությունը սահմանվում են արարքի կատարման պահին գործող նյութական օրենքով: Ավանդական պատկերացումների ներքո խորթ է, սակայն անհրաժեշտ, որ պատժի նշանակումը կարգավորող իմպերատիվ նորմի կիրառումը՝ ի դեմս դատարանի կողմից մեղմ պատիժ նշանակելու, տեղի է ունենում ոչ թե անձի՝ որպես քրեական նյութաիրավական հարաբերության մասնակցի դրսևորած, այսինքն՝ անձի քրեաիրավական վարքագծի կամ բնութագրի, այլ նրա դատավարական գործողությունների հետևանքով: Պրակտիկայում այս առումով հնարավոր են դեպքեր (այդ թվում՝ համաձայնեցման վարույթի պարագայում), երբ քրեադատավարական օրենքը փոխվում է ի վնաս համագործակցողի: Այստեղ նույնպես անհրաժեշտ է լինելու շեղվել քրեադատավարական մեկ այլ ելակետային նորմից, որի համաձայն՝ վարույթը կարգավորվում է տվյալ պահին գործող օրենքով և թույլ չի տալիս պատասխանատվությունն ու պատիժը փաստացի ծանրացնող դատավարական նորմերի հետադարձ գործողությունը: Մասնավորապես, *Սկոպպոլան ընդդեմ Իտալիայի գործով* 2009 թ. սեպտեմբերի 17-ի իր վճռում Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) մեծ պալատը արձանագրեց, որ տեղի էր ունեցել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա կամ ՄԻԵԿ) 7-րդ հոդվածի (Պատասխանատվություն միայն օրենքի հիման վրա) խախտում, քանի որ հանցագործությունը կատարելուց հետո դիմումատուի նկատմամբ արագացված կարգի կիրառման մեջ փոփոխության պատճառով նրա «պատիժը»՝ ինքնավար իմաստով, խստացվել էր³:

³ Սկոպպոլան դատապարտվել էր մեկ այլ հանցագործությամբ զուգորդված սպանության համար, որը օրենսդրությամբ պատժվում էր միայն ցմահ ազատազրկմամբ: Արարքի կատարման պահին գործող մեկ այլ նորմի համաձայն՝ ցմահ ազատազրկում նախատեսող հանցագործության վերաբերյալ քրեական գործը արագացված կարգով քննվելու արդյունքում նշանակվող պատիժը փոխարինվում էր 30 տարվա ազատազրկմամբ: Սկոպպոլան ընդունել էր իր մեղքը, սակայն նրա նկատմամբ 30 տարվա ազատազրկում պատիժ նախատեսող դատավճիռն ուժի մեջ մտնելու օրը օրենսդիրը փոփոխություն էր կատարել նշված օրենքում և սահմանել, որ սպանության համար օրենքով նախատեսված ցմահ ազատազրկումը արագացված կարգի կիրառման արդյունքում պատիժ նշանակելու դեպքում այն պետք է փոխարինվի ցմահ ազատազրկմամբ՝ ցերեկային ժամերին մեկուսացնելով: Այս փոփոխության հիմքով մեղադրանքի կողմը բողոքարկեց դատավճիռը՝ պատժի խստացման առումով, և վերադաս դատական ատյանները, գտնելով, որ օրենսդրական փոփոխությունները դատավարական բնույթի էին, իսկ ընթացիկ գործերով վարույթը կարգավորվում է տվյալ, այսինքն՝ վերանայման պահին գործող դատավարական օրենսդրությամբ, բեկանեցին դատավճիռը, տես՝ [http://hudoc.echr.coe.int/sites/eng/Pages/search.aspx?docname":\["ScoppolavItaly"\],"documentcollectionid2":\["GRANDCHAMBER", "CHAMBER"\],"itemid":\["001-94135"\]](http://hudoc.echr.coe.int/sites/eng/Pages/search.aspx?docname):

3.1.2. Համագործակցության միջնորդության քննության միայն մեկ ելքի բողոքարկման հնարավորությունը

Նախագծի ընդհանուր մոտեցումն այն է, որ բողոքարկման ենթակա է միայն ընդհանուր կարգով վարույթը շարունակելու որոշումը, իսկ համագործակցության կարգով՝ ոչ, ինչը արտացոլվում է բոլոր փուլերում՝

3.1.2.1. Մինչդատական վարույթում՝ նախաքննության ավարտից հետո, երբ հսկող դատախազը պետք է որոշում կայացնի, թե արդյոք գործը պետք է դատարան ուղարկել համագործակցության վարույթ անցկացնելու միջնորդությամբ, թե ոչ.

«4. Մեղադրյալին և պաշտպանին հանձնվում է մեղադրյալի նկատմամբ դատաքննության հատուկ կարգ կիրառելու միջնորդությամբ քրեական գործը դատարանին հանձնելը մերժելու մասին որոշումը, որը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Մինչև բողոքի լուծումը քրեական գործը չի կարող ուղարկվել դատարան» (*Հոդված 466, մաս 4-րդ*):

Ինչպես կտեսնենք ներքևում, նախաքննության սկզբում մեղադրյալի ու նրա պաշտպանի համագործակցության միջնորդության առթիվ հսկող դատախազի որոշումը ընդհանրապես բողոքարկման ենթակա չէ:

3.1.2.2. Դատական վարույթում՝ նախնական դատախոսների ընթացքում հարցին անդրադառնալիս.

«1. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա են առաջին ատյանի դատարանի հետևյալ դատական ակտերը՝... 12) համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատախոսներն ընդհանուր կարգով շարունակելու մասին» (*Հոդված 396. Վերաքննիչ դատարանում հատուկ վերանայման ենթակա դատական ակտերի շրջանակը, բողոքը բերելու ժամկետը և կարգը*):

Ինչպես տեսնում ենք, համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին դատարանի որոշումը բողոքարկման ենթակա չէ, օրինակ՝ տուժողի կամ գործով մյուս մեղադրյալների կողմից, այսինքն՝ համագործակցության վարույթի նկատմամբ այսպես կոչված «դատավարական վետո»-ի իրավունք նրանց տրված չէ:

3.1.3. Համագործակցության վարույթի արդյունքում կայացվող դատավճիռը չի կարող բողոքարկվել փաստի և իրավունքի առանձին հիմքերով.

«1. Համագործակցության վարույթով կայացված դատավճիռը կարող է բողոքարկվել սույն օրենսգրքով սահմանված կարգով, սակայն այն չի կարող բողոքարկվել սույն օրենսգրքի 378-րդ հոդվածով և 380-րդ հոդվածի 1-3-րդ մասերով նախատեսված հիմքերով» (*Հոդված 470. Համագործակցության վարույթով դատավճիռի վերանայման առանձնահատկությունները*):

Այս «չբողոքարկման» հիմքերը հետևյալն են՝

- Փաստական հանգամանքների մասին դատավճռում կամ որոշման մեջ շարադրված հետևությունների անհամապատասխանությունն ապացույցներին, և

- Նյութական օրենքի ոչ ճիշտ կիրառումը (արարքը հանցակազմ չի պարունակվում, կամ առկա է այդ արարքի հանցավորությունը բացառող որևէ հանգամանք, ինչպես նաև արարքին տրված իրավաբանական գնահատականը սխալ է օրենքով պահանջվողից ավելի մեղմ կամ խիստ լինելու պատճառով):

Այս հիմքերը համընկնում են այն նույն հիմքերին, որոնցով չի կարելի բողոքարկել

նան համաձայնեցման վարույթով կայացված դատավճիռը: Ի տարբերություն վերջինիս, սակայն, համագործակցության վարույթի արդյունքում կայացված դատավճիռը, 470-րդ հոդվածից ելնելով, կարող է բողոքարկվել 382-րդ հոդվածի հիմքով (Նշանակված պատժի անարդարացիությունը):

3.2. Միաժամանակ կան համագործակցության վարույթի առանձնահատկություններ, որոնք պետք է համարել ոչ թե շեղում կողմերի հավասարության և մրցակցության վերը նշված սկզբունքներից, այլ *վերջիններիս ներքո դատավարական լրացուցիչ երաշխիքների նախատեսում*: Մասնավորապես՝

3.2.1. *Վարույթի նախաձեռնմանը պաշտպանի պարտադիր մասնակցությունը.*

«4. Համագործակցության միջնորդությունը մեղադրյալի կամ նրա պաշտպանի կողմից հսկող դատախազին հանձնվում է քննիչի միջոցով: Եթե միջնորդությունը ներկայացնելու պահին մեղադրյալը պաշտպան չունի, ապա քննիչը միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար և մեղադրյալին հնարավորություն է ընձեռում պաշտպանի հետ քննարկել միջնորդությունը» (*Հոդված 461. Համագործակցության միջնորդության ներկայացնելու կարգը*):

3.2.2. *Վարույթին պաշտպանի պարտադիր մասնակցության պահանջը՝ անկախ մեղադրյալի կամքից, մեղադրյալի կողմից համագործակցության վարույթի կիրառման միջնորդության դեպքում.*

«Վարույթն իրականացնող մարմինը չի ընդունում պաշտպանից մեղադրյալի իրաժարվելը կամ անհապաղ միջոցներ է ձեռնարկում վարույթին պաշտպանի մասնակցությունն ապահովելու համար, եթե՝

... 10) մեղադրյալը միջնորդել է կիրառել համաձայնեցման կամ համագործակցության վարույթ» (*Հոդված 46. Պաշտպանի պարտադիր մասնակցությունը*):

Համագործակցության վարույթի նախաձեռնման և վարույթի հետագա ընթացքում, մեղադրյալի պաշտպանության իրավունքի իրացման արդյունավետության նակատառումներով, կարծում ենք, անհրաժեշտ է նախատեսել, որ որպես համագործակցող և արդեն համագործակցած մեղադրյալի պաշտպան չի կարող հանդես գալ նույն գործով վարույթին այլ մեղադրյալների պաշտպանությունն իրականացնող փաստաբանը՝ անկախ վերջիններիս կողմից համագործակցելու կամ չհամագործակցելու փաստից: Այս առումով իհարկե որոշ երաշխիքներ է ապահովում այն նորմը, որ մեղադրյալների շահերի միջև հակասությունների պարագայում նրանք պետք է ունենան առանձին պաշտպաններ, սակայն համագործակցության վարույթի առանձնահատկություններից, մասնավորապես՝ սեղմ ժամկետներում համագործակցության միջնորդության առթիվ որոշումներ կայացնելու անհրաժեշտությունից ելնելով, պետք է ընդունել, որ հնարավոր է՝ նշված հակասությունները առնվազն համագործակցության միջնորդությունը ներկայացնելու պահին պարզված չլինեն:

3.2.3. *Մեղադրյալի, պաշտպանի, հանրային մեղադրողի և տուժողի պարտադիր մասնակցությունը դատարանի կողմից պատժի հարցերը լուծելիս.*

«1. Համագործակցության վարույթով լրացուցիչ դատախազներն անցկացվում են մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի և տուժողի (եթե կայացվելիք դատավճիռը կարող է շոշափել նրա շահերը) պարտադիր մասնակցությամբ» (*Հոդված 468. Համագործակցության վարույթով լրացուցիչ դատախազները*):

3.2.4. *Անվտանգության լրացուցիչ երաշխիքների ապահովումը համագործակցության վարույթով իրականացվող նախաքննության և դրանց ապահովման անհրաժեշտ*

տության հարցի քննարկումը լրացուցիչ դատախոսումների ընթացքում.

«4. Մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապված այլ անձի անվտանգության սպառնալիքի առկայության դեպքում քննիչը որոշում է կայացնում սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված փաստաթղթերը (*համագործակցության միջնորդությունը, դրա վերաբերյալ քննիչի կարծիքը, միջնորդությունը բավարարելու մասին հսկող դատախազի որոշումը, ինչպես նաև համագործակցության համաձայնագիրը*. – *Ղ. խ.*) կնքված փակ ծրարում պահելու, ինչպես նաև համապատասխան անձի նկատմամբ սույն օրենսգրքով նախատեսված հատուկ պաշտպանության միջոցներ ձեռնարկելու մասին» (*Հոդված 464. Համագործակցության վարույթով իրականացվող նախաքննությունը*):

«4. Լրացուցիչ դատախոսումների ընթացքում հետազոտվում են այն ապացույցները, որոնք հաստատում են՝

... 5) համագործակցության արդյունքում մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապակցված այլ անձի անվտանգության սպառնալիքի աստիճանը» (*Հոդված 468. Համագործակցության վարույթով լրացուցիչ դատախոսումները*):

4. Համագործակցության վարույթի կիրառման դատավարական կարգը

Այս կետում ներկայացվում են համագործակցության վարույթի իրականացման միայն առանձին հարցեր, որոնք, մեր կարծիքով, այս նորույթի կիրառման սկզբնական փուլում լինելու են առավել քննարկվողները:

4.1. Վարույթը նախաձեռնում է պաշտպանական կողմը՝ համագործակցության միջնորդությունը քննիչի միջոցով հասցեագրելով հսկող դատախազին մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու պահից մինչև նախաքննության ավարտի մասին հայտարարելը: Միջնորդության մեջ նշվում է, թե «ինչում է արտահայտվելու մեղադրյալի համագործակցության բնույթը, ինչպես նաև այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել հանցագործությունը բացահայտելուն կամ այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելուն աջակցելու նպատակով» (*Հոդված 461. Համագործակցության միջնորդություն ներկայացնելու կարգը*):

4.2. Քննիչը մասնակցում է միջնորդության ներկայացմանը, իսկ լուծմանը՝ միայն դատախազը (*Հոդված 462. Համագործակցության միջնորդության լուծումը*): Քննիչը «մեղադրյալի և պաշտպանի կողմից ստորագրված միջնորդությունը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, ...այն հանձնում է հսկող դատախազին՝ կցելով դրա բավարարման կամ մերժման վերաբերյալ իր գրավոր կարծիքը» (*Հոդված 461, մաս 5-րդ*), իսկ *դատախազը՝ «համագործակցության միջնորդությունը և դրա վերաբերյալ քննիչի կարծիքը ստանալուց հետո՝ երեք օրվա ընթացքում, հսկող դատախազը որոշում է կայացնում համագործակցության միջնորդությունը բավարարելու կամ մերժելու մասին»* (*Հոդված 461, մաս 1-ին*):

Ինչպես տեսնում ենք, քննիչի համար իմպերատիվ նորմ է ներկայացված միջնորդությունն ուղարկել հսկող դատախազին, և նա չունի որևէ հայեցողական լիազորություն այլ կերպ վարվելու: Բավարարման կամ մերժման լիազորությունը տրված է միայն հսկող դատախազին, և քննիչը մասնավորապես միջնորդություն ներկայացվելու դեպքում չի կարող պաշտպանական կողմի վրա որևէ կերպ ազդել (օրինակ՝ միջնորդությունը հետ վերցնելու համար)՝ պնդելով, որ իրականում դատախազի հայեցողական լիա-

գորությունը իրականացվում է իր՝ քննիչի կարծիքի *հիման վրա*: Վերջին երկու բառը շատ կարևոր է՝ այս հարցում քննիչի և հսկող դատախազի դատավարական հարաբերությունների օրենսդրական կարգավորման ճիշտ ընկալման առումով: Պատահական չէ, որ քննիչի գործառույթները նախատեսվում են Նախագծի 461-րդ հոդվածում՝ «Համագործակցության միջնորդության ներկայացնելու կարգը», իսկ հսկող դատախազի լիազորությունները՝ 462-րդ հոդվածում՝ «Համագործակցության միջնորդության լուծումը»: Այսինքն՝ քննիչը համագործակցության միջնորդության բավարարման կամ մերժման հարցի լուծմանը չի մասնակցում:

4.3. Նախագիծը, փաստորեն, նախատեսում է համագործակցության առաջարկի և համաձայնագրի առանձին փաստաթղթերի գոյություն: Այս առումով կարելի է ընտրել մեկ այլ՝ ԱՄՆ մոդելից բխող ճանապարհ, այն է՝ ստանալ մեղադրյալի և նրա պաշտպանի միջնորդությունը այն բովանդակությամբ/խմբագրությամբ, որն ընդունելի է հսկող դատախազի համար, և այս դեպքում համաձայնելով առաջարկի հետ դատախազը կկնքի համաձայնագիրը: Այս մոդելը նպաստում է, որ մի կողմից մեղադրյալը/պաշտպանը չեն անում այնպիսի միջնորդություն, որը կարող է մերժվել, և այդպիսով իրենց համար անցանկալի փաստաթուղթ իզուր չեն ստեղծում, իսկ մյուս կողմից՝ հսկող դատախազի համար անակնկալ չի լինում ոչ այդ միջնորդության բովանդակությունը, ոչ էլ դրա բուն փաստը: Սա, ինչ խոսք, ենթադրում է դատախազի ավելի մեծ ներգրավվածություն նախաքննության ընթացքում, մասնավորապես՝ նրա կողմից բանակցությունների վարում քննիչի միջոցով (հաշվի առնելով քննիչի և հսկող դատախազի գործառույթների տարանջատման ընդհանուր կարգավորումները), ինչն էլ պարտադիր է դարձնում քննիչի և դատախազի ամենօրյա սերտ աշխատանքը այս ուղղությամբ:

4.4. Համագործակցության համաձայնագրի բովանդակությունը. ըստ Նախագծի՝ համագործակցության համաձայնագրում, գործի, մեղադրանքի և կողմերի վերաբերյալ ռեկվիզիտային տվյալներից բացի, նշվում են մեղադրյալին ներկայացված մեղադրանքի փաստական նկարագրությունը և արարքի իրավական գնահատականը, համագործակցության բնույթը և այն գործողությունները, որոնք մեղադրյալը պարտավորվում է կատարել համագործակցության նպատակին հասնելու համար, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի այն նորմերը, որոնք կարող են կիրառվել համաձայնագրով նախատեսված պարտականությունները մեղադրյալի կողմից պատշաճ կատարելու դեպքում (*Հոդված 463. Համագործակցության համաձայնագիր կազմելու կարգը, մաս 2-րդ*):

Համագործակցության համաձայնագրի բովանդակությունը լրացնելու հնարավոր ուղիների առումով, կարծում ենք, արդյունավետ կլինի ԱՄՆ-ում կիրառվող համագործակցության համաձայնագրերի նմուշը, որի մոդելային տեքստը ներկայացված է սույն ուսումնասիրության հաջորդ կետում (*5. Համագործակցության համաձայնագրի տիպային օրինակ*): Համագործակցության համաձայնագրի տեքստի բովանդակության նկատմամբ օրենքով սահմանվող պահանջների շրջանակը, մեր կարծիքով, պետք է ընդլայնվի հետևյալ իմաստով՝

- Մեղադրյալի համար հասկանալի են այն բոլոր հետևանքները, որոնք կարող են առաջանալ սույն համաձայնագիրը նրա կողմից կնքվելուց հետո, մասնավորապես այն, որ նրա պաշտպանության իրավունքը ենթարկվելու է սահմանափակումների (նշել, թե ինչպիսի սահմանափակումների, ներառյալ՝ հաջորդ կետում նշվածները).

- Մեղադրյալի դեմ կարող են օգտագործվել գործով համագործակցության համա-

ծայնագիր կնքված լինելու, մեղադրյալի կողմից այն միջնորդված լինելու, համագործակցությունից հետագայում հրաժարվելու, ինչպես նաև՝ մեղադրյալի միջնորդությունը հսկող դատախազի, իսկ դատախազի համապատասխան միջնորդությունը դատարանի կողմից մերժվելու փաստերը:

• Մեղադրյալը պետք է հասկանա, որ դատարանը համագործակցության համաձայնագրի կողմ չէ և չի էլ դառնալու, և որ հսկող դատախազի միջնորդության հետ հետագայում դատավորը կարող է չհամաձայնել: Սա պայմանավորված է մի կողմից՝ ընդհանրապես դատական անկախության, իսկ մյուս կողմից՝ քրեական վարույթի արդյունավետության լեգիտիմ շահերը (ի դեմս դատախազի խոստումների իրագործելիության կանխավարկածի) պատշաճ կերպով հավասարակշռելու անհրաժեշտությամբ, ինչի մասին կխոսվի ներքևում:

4.5. «Քրեական հետապնդման ժամկետը կարող է կասեցվել հետևյալ հիմքերից որևէ մեկի առկայության դեպքում՝

4) մեղադրյալի հետ կնքվել է համագործակցության համաձայնագիր:

3. Քրեական հետապնդման ժամկետը կասեցվում է մինչև դրա համար հիմք ծառայած հանգամանքների վերանալը, իսկ սույն հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչև այն վարույթով առաջին ատյանի դատարանի եզրափակիչ դատական ակտ հրապարակելը, որի կապակցությամբ համագործակցության պարտականություն է ստանձնել մեղադրյալը» (*Հոդված 196. Հանրային քրեական հետապնդման ժամկետը կասեցնելու հիմքերը, մաս 2-րդ*):

Պրակտիկ կիրառման տեսակետից այստեղ կարևոր է նշել, որ այս ժամկետը վերականգնվում է անկախ նրանից, թե ինչպիսի դատավճիռ է կայացվում «մայր» գործով: Փաստորեն, համագործակցող անձի *մեղադրյալի* կարգավիճակը «սառեցվում է» այն ժամանակով, որի ընթացքում նա իրացնում է հանրորեն ավելի մեծ վտանգավորություն ներկայացնող հանցագործության վերաբերյալ գործով իր ունեցած *վկայի* կարգավիճակը⁴:

Այս առումով կարծում ենք, որ մեղադրյալի քրեական հետապնդման ժամկետի վերսկսումը պետք է կատարվի, հետևաբար՝ նրան իր համագործակցության պտուղներից օգտվելու հնարավորությունը պետք է տրվի «մայր» գործով դատաքննությունը, այսինքն՝ ապացույցների հետազոտումն ավարտելու պահից: Սա ավելի արդարացի կլինի համագործակցողի հանդեպ, քանի որ նա արդեն իսկ այդ պահին կատարած է լինելու համագործակցող անձի, այսինքն՝ վկայի իր պարտականությունները, և համագործակցության արդյունքից օգտվելը չպետք է կախվածության մեջ դրվի գործով այլ ապացույցներին տրված դատարանի գնահատականից կամ այդ գնահատականը՝ ի դեմս

⁴ «Վկա» հասկացության ինքնավար/գործառութային նշանակության մասին տե՛ս *Լյուկան ընդդեմ Իտալիայի* գործով ՄԻԵԴ 2001թ. փետրվարի 27-ի վճիռը. «41. Այս առումով այն փաստը, որ ցուցմունքները, ինչպես սույն գործով է եղել, տրվել են համամեղադրյալի և ոչ թե վկայի կողմից, **նշանակություն չունի:** Այս կապակցությամբ Դատարանը հիշեցնում է, որ Կոնվենցիայի համակարգում «վկա» հասկացությունը ունի «ինքնավար» իմաստ: Այսպիսով, եթե ցուցմունքը նշանակալի չափով կարող է որպես հիմք ծառայել դատապարտման համար, ապա անկախ նրանից, թե այն տրվել է վկայի կողմից՝ նեղ իմաստով, թե համամեղադրյալի կողմից, այն մեղադրանքի կողմի համար ապացույց է, որի նկատմամբ կիրառվում են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի (դ) կետով ամրագրված երաշխիքները», այն է՝ արդարացի դատաքննության և դրա մաս կազմող իր դեմ ցուցմունք տված վկաներին առերես հարցաքննելու անձի իրավունքները:

դատավճռի, հնչեցնելու պահից: Հնարավոր է, որ գործով ապացույցների համակցությունը դատարանի կողմից դիտվի ոչ բավարար՝ «ողջամիտ կասկածից այն կողմ» շենը բավարարելու համար, կամ էլ մեղադրական դատավճռի կայացումը անհնար լինի դատավարական արգելքի առունով, օրինակ՝ համագործակցող մեղադրյալի ցուցմունքը հանդիսանա «մայր» գործով մեղադրանքի հիմքում դրված միակ կամ վճռորոշ ապացույցը, իսկ «մայր» գործով մեղադրյալը համագործակցած մեղադրյալին առերես հարցաքննելու հնարավորություն ունեցած չլինի⁵: Եթե դատարանը որոշի վերսկսել դատաքննությունը, ապա մեղադրյալի քրեական հետապնդման ժամկետը պետք է նորից կասեցվի:

4.6. Մեղադրյալն իրավունք ունի հրաժարվելու համագործակցությունից. «Մինչև համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարումը մեղադրյալն իրավունք ունի գրավոր դիմումով հրաժարվել համագործակցությունից: Այդ դեպքում հսկող դատախազի որոշմամբ համագործակցությունը դադարեցվում է, և վարույթը շարունակվում է սույն օրենսգրքով սահմանված ընդհանուր կարգով» (*Հոդված 465. Համագործակցությունից հրաժարվելը*):

Այս դրույթի հետ կապված, կարծում ենք, անհրաժեշտ են որոշ հստակեցումներ, մասնավորապես՝

- «մինչև համագործակցության համաձայնագրով ստանձնած պարտականությունների կատարումը» ձևակերպման տակ արդյո՞ք նկատի է ունեցվում մեղադրյալի կողմից իր ստանձնած պարտականությունների կատարումը *սկսելը*, թե՞ դրանք կատարել-*ավարտելը*:

- Արդյո՞ք հրաժարվելու դեպքում համագործակցության համաձայնագրի կնքված կամ մեղադրյալի կողմից այն միջնորդած լինելու, մեղադրյալի միջնորդությունը հսկող դատախազի, իսկ դատախազի համապատասխան միջնորդությունը դատարանի կողմից մերժելու փաստերը կարող են որևէ կերպ հրապարակվել կամ օգտագործվել համագործակցած մեղադրյալի դեմ: Մեր կարծիքով, նշված փաստերը կարող են օգտագործվել անձի դեմ, սակայն այդ մասին մեղադրյալը պետք է պարտադիր տեղեկացվի նախքան համագործակցության համաձայնագիր կնքելը, և այդ իմացությունը պետք է հստակ արտահայտված լինի համաձայնագրի բուն տեքստում: Վերջինս պետք է պարունակի նաև այն սահմանները, որոնցում հնարավոր է օգտագործել այս փաստերը անձի դեմ: Օրինակ՝ ԱՄՆ մոդելում այս տվյալները կարող են օգտագործվել մեղադրյալին խաչաձև, այսինքն՝ դատախազի կողմից հարցաքննելու ընթացքում, եթե մեղադրյալը նախընտրած լինի ցուցմունք տալ, ինչպես նաև՝ հերքելու համար մեղադրյալի կողմից արված պնդումները և բերված փաստերը (տե՛ս ներքևում՝ կետ 5-րդ, «Համագործակ-

⁵ Սրա դասական օրինակը հենց *Լյուկայի*՝ վերը նշված գործն է, որով ՄԻԵԴ-ը խախտում արձանագրեց հենց այն հիմքով, որ նույն գործով երկու մեղադրյալներից մեկը, ում նկատմամբ վարույթը անջատվել էր, և ով ցուցմունք էր տվել մյուսի դեմ, առերես չէր հարցաքննվել վերջինիս, այսինքն՝ Լյուկայի կողմից ոչ դատարանում, ոչ էլ նախաքննության ընթացքում: Նախորդ ծանոթության մեջ այդ որոշումից արված մեջբերումը հենց պատասխանն էր Իտալիայի դատարանների կողմից ազգային օրենսդրության մեկնաբանության հիման վրա արված հետևյալ փաստարկին. «22. Վճռաբեկ դատարանը, ի թիվս այլի, նկատեց, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (դ) կետը տարածվում է «այն վկաների հարցաքննության վրա, որոնք... պարտավոր են ձիշտ ցուցմունք տալ, ոչ թե մեղադրյալների հարցաքննության վրա, որոնք իրավունք ունեն պաշտպանվելու լռություն պահպանելու կամ անգամ ստելու միջոցով»: Նշենք, որ ՄԻԵԴ-ը այս գործով Կոնվենցիայի խախտում արձանագրեց:

ցության համաձայնագրի» 6-րդ կետ):

4.6.1. *Ղատական վարույթներում.*

Նախնական դատախոսներ. *Նախագծի համաձայն՝* դատարանը, նախնական դատախոսների ընթացքում քննարկելով համագործակցության համաձայնագիր կնքած մեղադրյալի նկատմամբ դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու մասին հսկող դատախազի միջնորդությունը, բավարարում է այն, եթե «2.... համոզվում է, որ՝

1) համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագիրը մեղադրյալի կողմից կնքվել է կամավոր, պաշտպանի մասնակցությամբ և սույն գլխով նախատեսված մյուս պահանջների պահպանմամբ.

2) ներկայացվել են մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելու մասին առերևույթ բավարար ապացույցներ.

3) մեղադրյալի համագործակցությունը չի հանգել հանցանքի կատարմանը բացառապես իր մասնակցության մասին տվյալներ հայտնելուն.

4) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ մեղադրյալին մեղսագրվող արարքը նա չի կատարել» (*Հոդված 467. Համագործակցության վարույթով դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելու հիմքը և պայմանները*):

Այս հարցերի ցանկը պետք է լրացնել այն իմաստով, որ դատարանը պետք է համոզվի, որ՝

- մեղադրյալը համաձայնագիրը կնքել է *ինացաբար*, այսինքն՝ գիտակցելով այն հետևանքները, որ բխում են համաձայնագրի կնքումից.

- մեղադրյալի համար հասկանալի է համագործակցության համաձայնագրի տեքստը.

- մեղադրյալի ակնկալիքները ողջամիտ են և համապատասխանում են օրենսդրությանը:

Վերը նշված հիմքերից որևէ մեկի բացակայության դեպքում դատավորը պարտավոր է մերժել միջնորդությունը և կայացնել որոշում դատաքննությունը հատուկ կարգով անցկացնելը մերժելու և նախնական դատախոսներն ընդհանուր կարգով շարունակելու մասին (*Հոդված 467, մաս 3-րդ*), որպիսի որոշումը կարող է բողոքարկվել վերաքննիչ դատարան (*Հոդված 396, մաս 1-ին, կետ 12-րդ*): Ղատախազի միջնորդությունը բավարարելու դեպքում դատարանը որոշում է կայացնում լրացուցիչ դատախոսներ անցկացնելու մասին (*Հոդված 467, մաս 3-րդ*): Ղատարանի այս որոշումը, ինչպես նշվեց, բողոքարկման ենթակա չէ:

Լրացուցիչ դատախոսներ.

Համագործակցության վարույթով լրացուցիչ դատախոսներն անցկացվում են մեղադրյալի, նրա պաշտպանի, հանրային մեղադրողի և տուժողի (եթե կայացվելիք դատավճիռը կարող է շոշափել նրա շահերը) պարտադիր մասնակցությամբ (*Հոդված 468. Համագործակցության վարույթով լրացուցիչ դատախոսները, մաս 1-ին*): Մեղադրյալը և պաշտպանն իրավունք ունեն իրենց նկատառումները հայտնելու մեղադրյալի համագործակցության բնույթի և այլ էական հանգամանքների վերաբերյալ (*Հոդված 468, մաս 3-րդ*):

Նախագծի 468-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը վերաբերում են այն հարցերի շրջանակին, որոնք քննության են առնվում դատարանի կողմից լրացուցիչ դատախոսների ընթացքում, ինչպես նաև՝ այն հիմքերին, որոնց հիման վրա դատարանը պետք է լուծի այդ հարցերը: Մասնավորապես՝

«2. Լրացուցիչ դատախազների սկզբում հանրային մեղադրողը ներկայացնում է մեղադրանքի փաստական հիմքը, մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը, որից հետո հաստատում է մեղադրյալի համագործակցության փաստը և պարզաբանում դատարանին, թե հատկապես ինչու է դա արտահայտվել:

... 4. Լրացուցիչ դատախազների ընթացքում հետազոտվում են այն ապացույցները, որոնք հաստատում են՝

1) մեղադրյալի համագործակցության բնույթն ու սահմանները.

2) մեղադրյալի կողմից համաձայնագրով ստանձնած պարտականությունները պատշաճ կատարելը.

3) հանցագործությունը բացահայտելու և այն կատարած անձի պատասխանատվության անխուսափելիությունը ապահովելու գործում մեղադրյալի հետ համագործակցության դերը և նշանակությունը.

4) մեղադրյալի անձը բնութագրող, ինչպես նաև նրա պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները.

5) համագործակցության արդյունքում մեղադրյալի, նրա մերձավոր ազգականի կամ մեղադրյալի հետ կապակցված այլ անձի անվտանգության սպառնալիքի աստիճանը»:

Այսպիսով, լրացուցիչ դատախազների ընթացքում քննարկվող հարցերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի.

1. Հարցեր, որոնք վերաբերում են համագործակցող մեղադրյալին մեղսագրվող արարքում նրա մեղքի հիմնավորմանը և մեղադրյալի անձին, այսինքն՝ **մեղադրյալի քրեաիրավական վարքագծին ու հատկանիշներին**, և

2. Հարցեր, որոնք վերաբերում են համագործակցող մեղադրյալի կողմից համագործակցության պայմանագրի ներքո իր ստանձնած պարտավորությունների կատարման մասին, այսինքն՝ **մեղադրյալի դատավարական վարքագծին**:

Փաստորեն, մեղադրյալի մեղավորության (այսինքն՝ նրա քրեաիրավական վարքագծի) վերաբերյալ **ապացույցներ** դատարանի կողմից չեն հետազոտվում: Մեղադրողի կողմից պարզապես ներկայացվում են «մեղադրանքի փաստական հիմքը, մեղադրյալին վերագրվող արարքի իրավական գնահատականը», որից հետո մեղադրողը «հաստատում է մեղադրյալի համագործակցության փաստը և պարզաբանում դատարանին, թե հատկապես ինչու է դա արտահայտվել»:

Կարծում ենք, որ դատարանը պարտավոր է քննության առնել ոչ միայն պատժի ճիշտ նշանակման համար վերաբերելի դատավարական վարքագիծը փաստող **ապացույցները**, այլև մեղադրյալի բուն մեղավորության փաստը հաստատող ապացույցները: Ստացվում է, որ մեղադրյալի կողմից հանցագործություն կատարելու փաստը պարզապես ներկայացնում է դատախազը՝ առանց դատարանի կողմից դրա հիմքում ընկած ապացույցների հետազոտման: Դատարանի համար նաև մեղադրյալի քրեաիրավական վարքագծի վերաբերյալ ապացույցների հետազոտման պարտականություն նախատեսելը էլ ավելի անհրաժեշտ է դառնում, երբ ծանոթանում ենք Նախագծի հաջորդ **469-րդ հոդվածի** (**Համագործակցության վարույթով դատավճիռ կայացնելը**) բովանդակությամբ, մասնավորապես՝

«Համագործակցության վարույթի արդյունքում դատարանը կայացնում է մեղադրական դատավճիռ սույն օրենսգրքի 353-356-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ հաշվի առնելով սույն հոդվածով նախատեսված առանձնահատկությունները:» (**հոդ-**

ված 469, մաս 1-ին):

«2. Ղատավճռում շարադրվում են՝

1) մեղադրյալին մեղսագրվող հանցանքի փաստական նկարագրությունը և իրավական գնահատականը.

2) մեղադրյալի կողմից համագործակցության վերաբերյալ մինչդատական համաձայնագրով ստանձնած պարտականությունները կատարելու վերաբերյալ դատարանի հետևությունները, ինչպես նաև այդ հետևությունները հաստատող ապացույցները.

3) համագործակցության նպատակի նվաճման վերաբերյալ դատարանի հետևությունները, ինչպես նաև այդ հետևությունները հաստատող ապացույցները:

... 4. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանգամանքները չհաստատվելու դեպքում դատարանը որոշում է կայացնում նախնական դատախոսները վերսկսելու մասին» (հոդված 469, մաս 2-րդ և մաս 4-րդ):

Կարծում ենք, որ ամեն դեպքում 469-րդ հոդված 4-րդ մասով նախատեսված որոշումը կայացնելու համար դրա հիմքը (հոդվածի 2-րդ մասով, այդ թվում՝ վերջինիս 1-ին կետով նախատեսված հանգամանքները չհաստատվելու փաստը) դատարանի կողմից պետք է արձանագրվի միայն ապացույցների հիման վրա: Նախագծի 469-րդ հոդվածում վկայակոչված 353-356-րդ հոդվածներով սահմանվում են դատավճռի օրինականությանը և հիմնավորվածությանը, դրա բովանդակությանը և կառուցվածքին վերաբերող պահանջները, սակայն միաժամանակ նշվում է, որ որպես հատուկ նորմերի ամբողջություն գործում է հենց 469-րդ հոդվածը, որը, փաստորեն, սահմանում է, որ դատավճիռը պետք է լինի օրինական և հիմնավորված, սակայն միաժամանակ որպես ապացույցներ թույլ է տալիս հետազոտել միայն մեղադրյալի կողմից համագործակցության համաձայնագրի ներքո ստանձնած պարտավորությունները կատարելուն վերաբերող փաստերը:

Մեր կողմից առաջարկվող հավասարակշռության ապահովման միջոց կարող է ծառայել ԱՄՆ-ի փորձի որդեգրումը, այն է՝ հնարավորություն տալը դատարանին հարցնելու մեղադրողին՝ եթե չլիներ համագործակցության շրջանակներում մեղադրյալի կողմից հանցանքի կատարմանը իր սեփական մասնակցության մասին տվյալներ հայտնելը, ապա ի՞նչ ապացույցներով կհաստատվեր մեղադրյալին առաջադրված մեղադրանքը, ապա և՛ մեղադրողի կողմից նման ապացույցների նեկայացումը դատարանին: Սա խիստ կարևոր է նաև Նախագծի մեկ այլ սկզբունքային դրույթի կիրառման արդյունավետությունն ապահովելու համար, ըստ որի՝ «խոստովանական ցուցմունքը չի կարող անձին դատապարտելու հիմք հանդիսանալ, եթե այն չի հիմնավորվել պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում հետազոտված *ապացույցների* բավարար ամբողջությամբ» (Հոդված 22. Պատշաճ ապացուցումը, մաս 6-րդ), որից բնականաբար որևէ բացառություն արվել չի կարող:

Հակառակ դեպքում, փաստորեն, մեղադրյալի մեղավորության մասին դատարանի հետևությունների, ուստի և ընդհանրապես դատապարտման հիմքում ընկած ապացուցողական հիմքը, որքանով որ երբևէ ստուգվել է դատարանի կողմի, հանգում է հետևյալին՝ 1) մեղադրյալի կողմից հանցանքի կատարմանը իր մասնակցության մասին տվյալներ հայտնելը, 2) մեղադրողի կողմից մեղադրանքի փաստական հիմքը ներկայացնելը: Ինչ վերաբերում է մեղադրյալի մեղավորության ապացուցողական շեմին, այսինքն՝ մերկացնող ապացույցների բավարարության մասին հետևությանը, ապա վերջինս ստուգվում է միայն նախնական դատախոսների փուլում, երբ դատարանը պետք

է հետևություն անի այն մասին, որ «4) առկա չեն ակնհայտ տվյալներ այն մասին, որ մեղադրյալին մեղսագրվող արարքը նա չի կատարել» (*Հոդված 467, մաս 2-րդ, կետ 4-րդ*):

Ապացույցներով պետք է հիմնավորված լինի ոչ միայն մեղադրական դատավճռով նշանակվող պատիժը, այլ առաջին հերթին՝ դրա հիմքը՝ անձի մեղավորությունը, հետևաբար անհրաժեշտ է ընդլայնել լրացուցիչ դատալուսման ընթացքում քննարկվող հարցերին վերաբերող հետազոտության ենթակա ապացույցների շրջանակը: Տրամաբանորեն, սակայն, այդ հետազոտման ծավալը, ըստ համագործակցության վարույթի առանձնահատկությունների, պետք է լինի ավանդական հետազոտումից տարբերվող:

Այս առումով կարևոր է նաև հստակեցնել, թե որն է «համագործակցության նպատակի նվաճում»: Մեր կարծիքով, ելնելով «մեծ ձկան» դեմ գործը քննող դատարանի անկախության և ապացույցներն ազատորեն քննելու կանխավարկածից, որպես նշված նվաճում պետք է համարել ոչ թե այդ դատարանի կողմից «մեծ ձկան» նկատմամբ կայացված մեղադրական դատավճիռը, առավել ևս՝ ոչ թե նրա նկատմամբ նշանակված պատժի ծանրությունը, այլ այն, թե արդյոք համագործակցող մեղադրյալը կատարել է իր վկայություն տվող անձի պարտականությունները, անկախ այն բանից, թե ինչպես է նրա ցուցմունքը գնահատվել դատարանի կողմից:

5. Համագործակցության համաձայնագրի տիպային օրինակ

Քանի որ այս ինստիտուտի գործնական կիրառումն իր անհրաժեշտությունն ամենից հաճախ ապացուցում է ԱՄՆ-ում, ապա բերենք այդ երկրից վերցրած մի փաստացի օրինակ, որը, մեր կարծիքով, կարող է օգտակար լինել Համագործակցության համաձայնագրի տիպային օրինակի նախագիծը մշակելիս՝ հիմք ընդունելով, իհարկե, Նախագծի դրույթները:

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ⁶

1. Սույն համաձայնագրի կողմերը համաձայնվեցին հետևյալի մասին.

(Ա). «Վկան»՝ (կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ, դատապարտյալ) Ն.Ն.-ն

(Բ). _____ տարածքի _____ դատախազությունը, այսուհետ՝ «մեղադրող»⁷ կամ «ժողովուրդ»

2. Միավորման մասին դրույթ. Սույն փաստաթուղթը կազմված է երեք էջից: Այդ երեք էջերը պարունակում են 12 կետ, որոնք ամրագրում են համաձայնագրի պայմանները, իսկ վերջին էջը նաև պարունակում է կողմերի և Վկայի փաստաբանի տպագիր անուններն ու ստորագրությունները: Սույն փաստաթուղթը նպատակ ունի արձանագրել

⁶ Նախագիծը (հոդված 464, մաս 2-րդ) նախատեսում է համագործակցության առաջարկի (միջնորդության) և բուն համաձայնագրի առանձին դատավարական փաստաթղթերի առկայություն: Ուստի ամերիկյան այս փաստաթղթի տեքստը պետք է ընթերցել հենց որպես համաձայնագիր:

⁷ Այս համաձայնագրում, ինչպես ամերիկյան մոդելում է, անհրաժեշտ է, որ կողմերի դատավարական կարգավիճակները նշվեն կիրառաբար այն դատական վարույթի, որի ընթացքում էլ հենց իրացմանն են ուղղված համաձայնագրի դրույթները: Ըստ այդմ, համագործակցող մեղադրյալը կոչվում է «վկա», քանի որ նրա՝ որպես համաձայնագրի կողմի պարտականությունն է հենց այդ կարգավիճակով հանդես գալը իրենից ավելի ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձի գործով դատական քննության ընթացքում:

Վկայի և ժողովրդի միջև կնքված համաձայնության բոլոր պայմաններն ամբողջությամբ: Եթե որևէ պայման ուղղակիորեն նշված չէ սույն փաստաթղթում, ապա նման պայմանավորվածություն կողմերի միջև գոյություն չունի:

3. Ստորագրելով սույն համաձայնագիրը՝ Վկան ընդունում է, որ իրեն չի արվել անձեռնմխելիության ապահովման կամ մեղմ վերաբերմունքի *ոչ մի* ուղղակի կամ անուղղակի առաջարկ՝ բացի վեցերորդ կետում նշված *սահմանափակ* անձեռնմխելիության վերաբերյալ առաջարկից:

4. Վկան հաստատում է, որ ճշգրտորեն և լրիվությամբ կպատասխանի յուրաքանչ-յուր և ցանկացած հարցի կամ հարցման, որը կարող է ներկայացվել իրեն առաջարկի քննարկմանը նվիրված հանդիպման կամ հանդիպումների ընթացքում:

5. Վկան այնուհետև հաստատում է, որ գիտակցում է այն փաստը, որ սույն առաջարկի կնքումն ավարտելուց հետո դրա կատարումը ստուգվելու է ժողովրդի կողմից՝ դրա ճշգրտությունը, արժանահավատությունը, անկեղծությունը, վստահելիությունը, օգտակարությունը և/կամ Վկայի պահելաձևը՝⁸ գնահատելու նպատակով, և որ այդ գործոնները, գործով փաստերի հետ համակցության մեջ, Վկայի նախկին դատվածություն(ները) կամ նրա կողմից պարտավորությունների չկատարումը, ինչպես նաև ցանկացած այլ փաստական տվյալ, որը կարող է վերաբերելի համարվել ժողովրդի կողմից, կարող են հաշվի առնվել՝ ժողովրդի կողմից Վկային մեղմ վերաբերմունքի մասին որևէ առաջարկ անելու կամ չանելու հարցը լուծելիս: Բացի այդ, Վկան գիտակցում է, որ Վկային նկատմամբ մեղմ վերաբերմունքի մասին առաջարկ անելու կամ նման առաջարկ անելուց հրաժարվելու հարցը ժողովրդի բացառիկ հայեցողության առարկա է, և ժողովուրդը չունի Վկային մեղմ վերաբերմունքի մասին առաջարկ անելուց հրաժարվելը Վկայի համար պատճառաբանելու, բացատրելու կամ հիմնավորելու պարտավորվածություն:⁹

6. Սույնով ժողովուրդը ընդունում է, որ եթե Վկայի կողմից արված առաջարկությունը քննարկելուց հետո ժողովուրդը և Վկան որևէ պատճառով չեն զալիս մեղմ վերաբերմունքի մասին համաձայնության, ապա առաջարկ անելու մասին սույն հայտարարությունը չի կարող օգտագործվել Վկայի դեմ մեղադրողի կողմից գործով մեղադրական ապացույցների սկզբնական ներկայացման ժամանակ (*այսինքն՝ նախքան պաշտպանության կողմի կողմից իր փաստարկները ներկայացնելը*), սակայն կարող է օգտագործ-

⁸ Օրինակ, հնարավոր է, որ համագործակցող անձը տրամադրի բացահայտող տեղեկություն, տա համապատասխան ցուցմունք նախաքննության ընթացքում, սակայն դատարանում, չնայած այդ ցուցմունքը պնդելուն, նշի, թե «այնքան էլ համոզված չեմ», «լավ չեմ հիշում», որ «այնքան ժամանակ է անցել, որ», այսինքն՝ չհրաժարվի իր ցուցմունքներից, սակայն իր վարքագծով կասկածի տակ դնի իր իսկ նախաքննական և դատական ցուցմունքների արժանահավատությունը: Սա կանխելու համար ԱՄՆ-ում օգտագործվում է *nolo contendere* (*«Չեմ վիճարկում»*) եզրույթը, որի էությունը, մասնավորապես Քրեական դատավարության դաշնային կանոնների Մեղքի ընդունման գործարքը կարգավորող 11-րդ Կանոնի համաձայն, այն է, որ մեղադրյալը պարտավորվում է, որ բացի այն, որ չի բողոքարկելու դատավճիռը, նաև որևէ կերպ իր վարքագծով կասկածի տակ չի դնելու դրա հիմնավորվածությունը: Հակառակ դեպքում գործարքը չեղյալ է համարվում, և, որպես կանոն, այդ դեպքում մեղադրյալին սպառնում է ընդհանուր կարգով սովորաբար նշանակվողից ավելի ծանր պատիժ:

⁹ Սա լիովին վերաբերում է հսկող դատախազի կողմից Նախագծով սահմանված գործառնություններին այն փուլում, երբ նա որոշում է կայացնում մեղադրական եզրակացությունը՝ հաստատելով գործը հատուկ կարգ կիրառելու միջնորդությամբ կամ առանց դրա դատարան ուղարկելու մասին:

վել Վկայի խաչաձև հարցաքննության ընթացքում, եթե ինքը նախընտրի ցուցմունք տալ, ինչպես նաև՝ Վկայի կողմից կամ նրա անունից ներկայացված որևէ ապացույց, ցուցմունք, հայտարարություն, պնդում կամ փաստարկ վիճարկելու կամ հերքելու նպատակով՝ *ցանկացած* գործով կամ վարույթի ընթացքում:

7. Չնայած վեցերորդ կետում շարադրվածին ժողովուրդը կարող է օգտագործել այս առաջարկից ուղղակիորեն կամ անուղղակիորեն բխող ցանկացած տեղեկություն այլ ապացույցներ ձեռք բերելու կամ դրանց հետքին դուրս գալու համար, որպիսի ապացույցները կարող են օգտագործվել ցանկացած նպատակով, այդ թվում՝ Վկայի նկատմամբ ցանկացած քրեական հետապնդման համար:

8. Չնայած վեցերորդ կետում շարադրվածին ժողովուրդը Վկայի համար չի երաշխավորում անձեռնմխելիություն՝ սուտ ցուցմունք տալու կամ արդարադատության իրականացմանը խոչընդոտելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից:

9. Սույնով Վկան ընդունում է, որ սույն համաձայնագիրը կազմելու և առաջարկը ներկայացնելու ընթացքում իր շահերը ներկայացնում է փաստաբան Ն. Ն-ն, և որ իր փաստաբանը ֆիզիկապես ներկա է գտնվում սույն համաձայնագիրը կազմելու և առաջարկը ներկայացնելու ընթացքում, և որ ինքը բավարար հնարավորություն է ունեցել իր փաստաբանի հետ քննարկելու այն իրավունքները, որոնցից ինքը հրաժարվում է սույն առաջարկն անելու արդյունքում, այդ թվում՝ բայց ոչ միայն, Սահմանադրության Հինգերորդ փոփոխությամբ երաշխավորված իր դեմ ցուցմունք չտալու իրավունքը, ինչպես նաև՝ հնարավորություն է ունեցել իր փաստաբանի հետ քննարկելու սույն առաջարկի բնույթը, սույն համաձայնագիրը և բոլոր այն գործոնները, որոնք ինքը կարևոր է համարում նախքան սույն համաձայնագիրն ստորագրելը և նախքան սույն առաջարկն անելը:

10. Սույնով Վկան հաստատում է, որ իրեն տեղեկացրել են, որ ինքը ունի լռելու բացարձակ իրավունք, և որ ինքը հրաժարվում է այդ իրավունքից՝ սույն առաջարկը անելու նպատակով: Վկան նաև հաստատում է, որ ինքը այս առաջարկությունն անում է իմացաբար, գիտակցաբար, ազատորեն և կամավոր կերպով՝ առանց որևէ ճնշման, հարկադրանքի կամ պարտադրման:

11. Սույնով Վկայի փաստաբանը հաստատում է, որ վերոշարադրյալը իրապես և ճշգրտորեն արտացոլում է կողմերի միջև կնքված համաձայնությունը, և որ ինքը Վկային տեղեկացրել է այն իրավունքների մասին, որոնցից Վկան հրաժարվում է, սույն համաձայնագրի բնույթի և առաջարկի բնույթի մասին, և որ Վկային չի տրվել անձեռնմխելիության ապահովման կամ մեղմ վերաբերմունքի ոչ մի ուղղակի կամ անուղղակի խոստում, և որ, իր կարծիքով, Վկայի կողմից սույն համաձայնությունը կնքվում է իմացաբար, գիտակցաբար, ազատորեն և կամավոր կերպով:

12. Սույնով ժողովրդի փաստաբանը հաստատում է, որ վերոշարադրյալը իրապես և ճշգրտորեն արտացոլում է կողմերի միջև կնքված համաձայնությունը, և որ անձեռնմխելիության ապահովման կամ մեղմ վերաբերմունքի ոչ մի ուղղակի կամ անուղղակի խոստում Վկային չի տրվել:

Ամսաթիվ_____		
Վկա	Ն.Ն.	Ստորագրություն

Վկայի փաստաբան	Ա.Ա.	Ստորագրություն

Ժողովրդի փաստաբան/մեղադրող	Հ.Հ.	Ստորագրություն

6. Համագործակցության վարույթի արդյունավետության ապահովման երաշխիքները և զարգացման հեռանկարները: Համագործակցության վարույթի կիրառման ոլորտի ընդլայնման անհրաժեշտությունը

Համագործակցության վարույթի առավել օպտիմալ կիրառումն ապահովելու համար անհրաժեշտ են ընդհանուր ենթակառուցվածքային բարեփոխումներ ևս, որոնք, մեր կարծիքով, անխուսափելի կդառնան այս նորույթը շահագործման հանձնելուց որոշ ժամանակ անց, և որոնք կարելի է բաժանել օրենսդրության և պրակտիկայի փոփոխմանն ուղղված քայլերի:

6.1.1. Օրենսդրություն

• **Համագործակցության վարույթի կիրառելիությունը անհրաժեշտ է տարածել նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործություններ կատարելու մեջ մեղադրվող անձանց վրա**, ովքեր պատրաստակամ կլինեն առանձնապես ծանր հանցագործությունները բացահայտող տեղեկություններ տալու իրավապահներին և համապատասխան մերկացնող ցուցմունքներ տալու դատարանում: Սա կարևոր է, մասնավորապես, հանցավոր համագործակցությունների պարագլուխներին չեզոքացնելու առումով, որոնց բացահայտման համար անհրաժեշտ տեղեկություններ, իսկ դատապարտման համար՝ անհրաժեշտ ցուցմունքներ կտան իրենց մերձավորագույն մարդիկ: Հակառակ դեպքում այդ պարագլուխները կձգտեն ապահովագրվել՝ իրենց մերձավոր շրջապատը ծանր և առանձնապես ծանր հանցանքներ գործած անձանցով համալրելով կամ նրանց այդպիսի հանցանքներ կատարելու ստիպելով: Պետք է հիշել, որ որքան վտանգավոր է ամենամեծ «ծուկը», այնքան ավելի մեծ է նրան բացահայտելու և դատապարտելու իրական հնարավորություններ տվող աղբյուրի վտանգավորությունը: Օրենսդիրը պետք է խուսափի պարագլուխների մոտ սնան կերպ իրենց անձեռնմխելիությունն ապահովելու գայթակղություն առաջացնելուց:

• **Անհրաժեշտ կլինի համագործակցության վարույթի շրջանակները տարածել նաև դատապարտված անձանց վրա:** Այս առումով անհրաժեշտ կլինի ընդլայնել նոր հանգամանքների ուժով դատական ակտերի վերանայման հիմքերի շրջանակը: Մասնավորապես՝ որպես *նախկինում կայացված դատավճիռների (այսինքն՝ պատժի մասով դատական եզրափակիչ ակտերի) վերանայման* հիմք անհրաժեշտ է նախատեսել ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն բացահայտող տեղեկատվության կամ այն կատարելու մեջ մեղավոր անձի դեմ մերկացնող ցուցմունք տալու փաստը: Սրա իմաստը այն է, որ առավել վտանգավոր հանցագործը չպետք է «հանգիստ քնի» այն բանից հետո, երբ իրեն մերկացնելուն ունակ անձը արդեն դատապարտվել է: Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ անդամ պետություններին ուղղված «Վկաների և արդարադատության հետ համագործակցողների պաշտպանության վերաբերյալ» Rec(2005)9 Հանձնարարականի 1-ին (Սահմանումները) կետի համաձայն «արդարադատության հետ համագործակցող» տերմինը նշանակում է՝ յուրաքանչյուր ոք, ով բախվում է քրեական մեղադրանքների հետ կամ դատապարտվել է քրեական միավորման կամ ցանկացած տեսակի այլ քրեական կազմակերպության մեջ կամ կազմակերպված հանցավորության հանցանքների մեջ մասնակցելու համար, սակայն որը համաձայն է համագործակցել քրեական արդարադատության համակարգի մարմինների հետ՝ հատկապես քրեական միավորման կամ կազմակերպության մասին վկայություններ տալով կամ կազմակերպված հանցագործության կամ այլ լուրջ հանցանքների հետ կապված խախտումների վերաբերյալ»:

• *Քրեական օրենսգրքում պետք է շեշտակի մեծացնել սանկցիաները կազմակերպված հանցավորության դրսևորում հանդիսացող հանցագործությունների համար*: ԱՄՆ-ում, օրինակ՝ զինված ավազակության համար 15 տարի ստանալուն ձգտող անձը չափազանց ուրախ է այդ հեռանկարով, հետևաբար ավելի է ձգտում համագործակցության, քանի որ այլ տարբերակը 40 տարվա կամ ցմահ ազատազրկումն է:

6.1.2. Պրակտիկա

• *Անհրաժեշտ է դատական պրակտիկայում ձևակերպել «վտանգված վկա» հասկացությունը*՝ կիրառելով ՄԻԵԴ դիրքորոշումները և նշված Հանձնարարականի դրույթները՝ կապված այսպիսի կարգավիճակ տալու չափանիշների և ընթացակարգերի հետ, մասնավորապես՝ վկայող անձանց անվտանգության իրական երաշխիքները ապահովելու համար: Համագործակցության վարույթի պրակտիկական վերը նշված ձևով տարածվելու դեպքում (ինչը, մեր կարծիքով, անխուսափելի է և կապ չունի ազգային մենթալիտետի հետ), երբեմն անհրաժեշտ կլինի առավել վտանգավոր պարագույնների դեմ պայքարել անանուն վկաների միջոցով: Այս առումով օրինակելի կլինի Նիդերլանդների փորձը, որն ընդունելի է համարվել ՄԻԵԴ-ի կողմից (ընդ որում, մեջբերված դիրքորոշման ընդգծված մասը կարելի է դիտել որպես վտանգված վիճակում գտնվելը փաստելու համար ելակետային չափանիշ)

«Սույն գործի հանգամանքներում, որոնք ներառում են այն փաստը, որ դիմումատուսն ողջամտորեն կասկածվել է (և այնուհետև՝ դատապարտվել) այնպիսի հանցավոր խմբավորման անդամ լինելու մեջ, որը զբաղվել է թմրամիջոցների և զենքի հետ կապված առանձնապես վտանգավոր հանցագործություններ կատարելով, ինչպես նաև՝ այն փաստը, որ դիմումատուսն ձերբակալման պահին զինված է եղել լիցքավորված ատրճանակով, Ղատարանը գտնում է, որ ողջամտորեն կարելի էր սպասել, որ դիմումատուսն որպես վտանգ կդիտվի այն անձանց կողմից, որոնք տեղյակ են նրա գործերին»: Հետևաբար չի կարելի ասել, որ Նիդերլանդների դատարանները գործել են ոչ ողջամիտ կերպով՝ նրան որևէ լրացուցիչ տեղեկատվություն տրամադրելը մերժելով, կամ գործել են կամայականորեն: Համապատասխանաբար՝ գործում եղել են ինֆորմատորի ինքնությունը գաղտնի պահելու բավարար հիմքեր»¹⁰:

• Եթե ողջամտորեն ենթադրենք, որ քննարկվող ինստիտուտին վերաբերող ՀՀ պրակտիկայում կառաջանան և լուծում կպահանջեն ապացույցների թույլատրելիության և արժանահավատության հետ այն նույն խնդիրները, ինչ որ եղել և լուծվել են ԱՄՆ-ում, ապա պետք նշենք, որ թույլատրելիության հետ կապված հիմնական հարցն այն է, թե արդյոք մեղադրյալի կողմից այլ անձի դեմ տրված մերկացնող ցուցմունքի շնորհիվ ստացված նոր ապացույցները կարող են օգտագործվել հենց համագործակցած մեղադրյալի դեմ: ԱՄՆ-ում պատասխանն է՝ այո: Սրա հետ կապված էլ՝ նյուս հարցը. *ելնելով Նախագծով առաջարկվող կարգավորումներից*, այն է, թե արդյոք այն դեպքում, երբ

¹⁰ Կոկն ընդդեմ Նիդերլանդների, 2000 թ. հուլիսի 4-ի որոշումը, Իրավունքը, կետ 1-ին: 1997 թ. սեպտեմբերի 10-ին Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի «Վկաներին հարկադրանքի ենթարկելու և պաշտպանական կողմի իրավունքների վերաբերյալ» Հ-Ր (97)13 Հանձնարարականում առաջարկվում է, որ անդամ պետությունները պետք է դատարանում օգտագործեն «դատական մարմնի առջև տրված նախաքննական ցուցմունքները որպես ապացույց, եթե վկաների դատարան ներկայանալն անհնար է, կամ եթե նրանց դատարանում ներկայանալը կարող է մեծ և իրական վտանգ ստեղծել վկաների, նրանց հարազատների կամ նրանց մերձավոր անձանց կյանքի և անվտանգության համար»: Կարծում ենք, որ այս առաջարկը Նախագծում լիովին արտացոլված է՝ ի դեմս վկաների ցուցմունքների դեպոնացման կարգի:

համագործակցության վարույթի շրջանակներում անձի կողմից տրված ցուցմունքը հետագայում հանգեցնում է այնպիսի փաստերի բացահայտման, որոնք անհրաժեշտ են դարձնում մեղադրյալի դեմ ներկայացված մեղադրանքը ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության վերաորակելը, այսինքն՝ արարքը համագործակցության վարույթի շրջանակներից դուրս բերելը, ապա արդյո՞ք մինչ այդ ձեռք բերված ցուցմունքները պետք է համարվեն պատշաճ անձից, հետևաբար՝ պատշաճ կերպով ձեռք բերված, թե՞ ոչ: Պատասխանը, մեր կարծիքով, դարձյալ դրական պետք է լինի, քանի որ ամեն դեպքում ապացույցները մինչև նոր փաստերի ի հայտ գալը ձեռք են բերվել օրենքով սահմանված կարգով: **Մյուս կողմից, սակայն, եթե պարզվի, որ նույն փաստերը հայտնի են եղել նախաքննությանը, սակայն չեն օգտագործվել՝ արարքը համագործակցություն թույլ տվող հողվածով/նասով/կետով որակելու և անձից իր դեմ ցուցմունքներ վերցնելու համար, ապա այս դեպքում մեղադրյալի ցուցմունքների ու դրանց հիման վրա ձեռք բերված մյուս ապացույցների օգտագործումն անթույլատրելի է:**

Սա, կարծում ենք, ևս մեկ փաստարկ է այն բանի օգտին՝ համագործակցության վարույթի սկսվելն ու ապացույցներ ստանալը կախված չլինեն քննիչի կամ դատախազի *կարծիքից* առ այն, թե ինչ է տեղի ունեցել իրականում, այսինքն՝ վարույթի այս՝ այն էլ սկսված փուլում նրանց կողմից արարքին տրված որակումից: Հետևաբար, համագործակցության վարույթը անհրաժեշտ կլինի տարածել նաև ծանր և առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձից ցուցմունքներ ստանալու վրա՝ պայմանով, որ նման անձի հետ կարելի է համագործակցել միայն առանձնապես ծանր հանցագործություն բացահայտելու կամ այդպիսին կատարած անձի դեմ ցուցմունք ստանալու համար:

Համագործակցող մեղադրյալի ցուցմունքների *արժանահավատության* հետ կապված խնդիրներ, օրինակ, ԱՄՆ-ում առաջանում են, երբ դատարանում առավել վտանգավոր մեղադրյալի պաշտպանը, վիճարկելով իր պաշտպանյալի դեմ համագործակցող մեղադրյալի տված ցուցմունքը, նշում է, որ նրան չի կարելի հավատալ, քանի որ նա հանցագործ է, արդեն իսկ դատապարտվել է, և ուղղակի շահագրգռված է, որ իր հաճախորդը դատապարտվի, իսկ ինքը ստանա մեղմ պատիժ: Նման կարգի փաստարկների դեմ էլ հենց ուղղված է մեր կողմից համագործակցության համաձայնագրի բովանդակության վերը առաջարկված այն կետը, որ մեղադրյալի նկատմամբ մեղմ վերաբերմունքը պետք է ապահովվի՝ անկախ առավել վտանգավոր մեղադրյալի գործով մեղադրական դատավճիռ կայացվելու հանգամանքից: Այսինքն, մեղադրյալը պետք է համարվի իր պարտականությունները կատարած՝ անկախ այն գործի ելքից, որտեղ նա փաստացի պարզապես վկա է: Սա իրականում լրացուցիչ գործիք է «մայր» գործով մեղադրողի ձեռքին՝ առավել վտանգավոր անձի դատապարտմանը հասնելու համար:

• *Ղատարանի անկախության հարցեր* միշտ էլ առաջանում են այն առումով, որ դատավորներն իրավացիորեն գտնում են, որ քանի որ իրենք համագործակցության համաձայնագրի կողմ չեն, ապա որևէ կերպ կաշկանդված չեն հսկող դատախազի կողմից տրված խոստումներով: Հենց սրա համար էլ համագործակցության համաձայնագրի տեքստում պետք է հստակ գրվի, ինչպես ԱՄՆ-ի վերը բերված օրինակում է, որ կողմերի միջև, համաձայնագրում նշվածներից բացի, այլ պայմանավորվածություններ գոյություն չունեն: Մյուս կողմից էլ, սակայն, դատավորները, ինչպես կրկին հուշում է ԱՄՆ-ի փորձը, իրենք էլ շահագրգռված են քրեական արդարադատության համակարգի անխափան աշխատանքով՝ որպես պրոֆեսիոնալներ: Ոչ մի համաձայնագիր չի կարող դատավորին պարտավորեցնել դատապարտելու մի նվազ ծանր հանցագործության մեջ մեղադրվող համագործակցող անձին, ով անմեղ է, կամ թե՛ դատապարտելու առա-

վել ծանր հանցագործության մեջ մեղադրվող անձին, ում մեղքը չի հաստատվել *ողջամիտ կասկածից այն կողմ* չափանիշի հիման վրա: Մեր կարծիքով, դատական անկախության տեսակետից ամենամեծ խնդիրները ոչ մի երկրում էլ կապված չեն հատուկ վարույթների շրջանակներում մեղմ պատիժ նշանակելու պարտավորության հետ:

- *Պրակտիկայում պետք է լուծվի այն հարցը, թե արդյոք ինչ տեսք կստանան անխուսափելի բանակցությունները*՝ նախքան համագործակցության միջնորդությունը մեղադրյալի և նրա պաշտպանի կողմից արվելը կամ դատախազի կողմից այն կազմվելը: Իրոք, նախաձեռնողը պետք է լինի պաշտպանական կողմը, որը, խորհրդակցելով մեղադրյալի հետ, այնուհետև կհանդիպի քննիչին: Այս փուլում կարևոր է հսկող դատախազի ամենօրյա ընդգրկվածությունը, ինչը լինելու է անխուսափելի և ի վերջո հանգեցնելու է օրենսդրական անհրաժեշտ փոփոխությունների՝ ի դեմս հսկող դատախազի դերի բարձրացման:

ПРОИЗВОДСТВО СОТРУДНИЧЕСТВА: ФИЛОСОФСКИЕ И ПРАВОВЫЕ ОСНОВЫ, ПРЕДЕЛЫ И ПОРЯДОК ПРИМЕНЕНИЯ, ГАРАНТИИ ЭФФЕКТИВНОСТИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ

Давид Хачатурян

*Ассистент кафедры Уголовно процессуального права,
канд. юр. наук, проректора Академии юстиции Армении*

Статья посвящена предлагаемому проектом нового УПК институту производства при заключении досудебного соглашения о сотрудничестве. В статье обстоятельно исследуются философские и криминологические основы данной формы производства по уголовным делам, его особенности по сравнению с общим порядком рассмотрения уголовных дел, исследуются пределы применения и сам порядок осуществления данного производства – с момента его инициирования стороной защиты до момента назначения наказания судом. Все указанные вопросы обсуждаются с точки зрения оптимального балансирования: частных и публичных интересов, функций надзирающего прокурора и следователя, обвинителя и суда. Отдельной главой представлен модельный вариант соглашения сотрудничества, взятый из судебной практики США. В конце статьи исследуются вопросы, правильное законодательное либо правприменительное разрешение которых, по мнению автора, обеспечит наиболее эффективное достижение целей нового вида производства по уголовным делам, одновременно совмещая их с реализацией не менее легитимных интересов, в частности: обеспечением права обвиняемого на справедливое судебное разбирательство, включая право на вызов и допрос свидетелей, запретом на использование недопустимых доказательств, применением мер защиты свидетельствующих лиц, и др. Автор предлагает в дальнейшем расширить границы применения данного вида производства – сделав возможным сотрудничество с лицами, обвиняемыми в совершении тяжких и особо тяжких преступлений, а также с осужденными лицами – в качестве основания пересмотра назначенных им наказаний предусматривая полученные от них информацию или показания по текущим делам.

COOPERATION AGREEMENTS: PHILOSOPHICAL AND CRIMINOLOGICAL FOUNDATIONS, SCOPE AND PROCEDURE OF APPLICATION, SAFEGUARDS OF EFFICIENCY AND WAYS OF DEVELOPMENT

Davit Khachatryan

(Ph.D.) Vice Rector of the Academy of Justice Mr.

Article is dedicated to introduction of cooperation agreements envisaged under the Draft CPC. The author provides careful analysis of the philosophical and criminological foundations of the new institution, its peculiarities in comparison with classic criminal proceedings, as well as the limitations over the use of this special type of process, their development – from the moment of initiation by the defense up until sentencing judgment. All the above issues are treated from the angle of the necessity to strike a proper balance between: the public and private interests, the functions of the prosecutor and the investigator in the case, those of the prosecutor and the judge when in court, as well as the victim and the perpetrator. In a separate Chapter in the Article a U.S. type of a cooperation agreement is presented as a possible model for Armenia. In the end the author identifies problems the right legislative and practical solutions of which will secure the most effective ways of reaching the goals of this form of proceedings – along with securing not less legitimate interests, such as right to a fair trial, including right to cross-examination of witnesses, use of exclusionary rule, means of protection of testifying persons, etc. The author suggests widening of the scope of application of cooperation agreements enabling cooperation with those suspects who are accused of committal of grave and particularly grave crimes, as well as with the convicted persons enabling the mitigation of their sentences in exchange for their revealing data or inculcating testimony against ‘bigger fishes.’

Բանալի բառեր – ապացույցների թույլատրելիություն, դատախազի դերը, դատարանի դերը, տուժողի դատավարական «վետոյի» բացակայություն, կիրառման սահմանները, սանկցիաների խստացում, վկա, սպառնալիքի տակ գտնվող, դատարանի անկախություն

Keywords: admissibility of evidence, role of a prosecutor, role of a judge, no “veto” power for the victim, scope of application, increasing the sanctions, “endangered witness”, reasonable expectations of leniency by the cooperator, independence of the court

Ключевые слова: допустимость доказательств, роль прокурора, роль суда, отсутствие процессуального “вето” потерпевшего, пределы применения, ужесточение санкций, свидетель, находящийся под угрозой, независимость суда